

## ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԳՈՐԾՐՆԹԱՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈԻԼԵՐԸ

### Ա. ՆԱԽԱԳԻԾ

- Նոր ճանապարհի նախագիծը պատրաստ է, սակայն կարող է վերանայվել նախնական ուսումնասիրության արդյունքների հիման վրա:



- Չափագրվում են Ձեր հողատարածքներն ու շինությունները:
- Չափագրման ժամանակ Ձեր ներկայությունը ցանկալի է:
- Չափագրման արդյունքում կարող են հայտնաբերվել ազդեցության ենթակա նոր հողակտորներ և որոշ հողակտորներ կարող են դուրս գալ օտարվող հողակտորների ցանկից:

### Բ. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

- Ծրագիրն իրականացնող գրասենյակի մասնագետները կայցելեն ձեր համայնք:
- Ձեզ կներկայացվեն օտարման գործընթացի փուլերը, գործընթացում ձեր իրավունքները և փոխհատուցման սկզբունքները, ինչպես նաև հնարավոր բողոքների քննարկման ընթացակարգը:



### 2. ՄԱՐԴԱՀԱՄԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ



#### Մարդահամար`

- Նկարագրվում է ձեր ընտանիքը և բոլոր անդամները:
- Տեղեկատվությունը չի անդրադառնում փոխհատուցման չափի վրա:

### Գ. ՆԱԽԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

- ՀՀ Կառավարության 24.12.2015թ-ի թիվ 1531-Ն որոշում ««Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի Տրանշ-2 (Հին Սիլիկյան-Աշտարակ) ճանապարհահատվածներում առկա գույքի և հողատարածքների նախնական ուսումնասիրման մասին»» :



#### Սոցիալ-տնտեսական հետազոտություն`

- Տնային տնտեսության նկարագրության հարցաշարը կլրացվի ազդեցության ենթակա բոլոր ընտանիքների հետ:
- Հետազոտությունը անանուն է:
- Արդյունքները չեն անդրադառնում փոխհատուցման չափի վրա:

### ՆԱԽԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ`

1. Գույքի և հողատարածքների ներքին և արտաքին չափագրում
2. Գույքի և հողատարածքների տեղագնություն, ֆոտո և տեսամրագրում
3. Ծառերի, մշակաբույսերի տեղագնություն և հաշվառում
4. Բարելավումների տեղագնություն և հաշվառում
5. Մարդահամար և սոցիալ-տնտեսական հետազոտության անցկացում
6. Ազդեցության ենթակա անձանց, գույքի և հողատարածքների վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերի տեսածրում (սկան) և հավաքագրում
7. Ազդեցության ենթակա գույքերի ցանկի ճշգրտում
8. Ուսումնասիրված գույքի և հողատարածքների նկարագրության արձանագրությունների կազմում

### 3. ԳՈՒՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ



- Նկարագրվում է օտարման ենթակա գույքը, հողակտորները, շինությունները, մշակաբույսերը, բերքատու և դեկորատիվ ծառերը:

### Դ. ԲԱՑԱՌԻԿ` ԳԵՐԱԿԱ ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀԻ ՃԱՆԱԶՈՒՄ



- Նախնական ուսումնասիրության արդյունքում ճշգրտված ազդեցության ենթակա գույքերը ՀՀ կառավարության որոշմամբ կճանաչվեն բացառիկ` գերակա հանրային շահ:

### ԲԱՑԱՌԻԿ` ԳԵՐԱԿԱ ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀԻ ՃԱՆԱԶՈՒՄ ԵՎ ՀՕՏՕ

#### ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

1. Հանրային լսումների կազմակերպում
2. Չափագրման, գույքի տեղագնության և մարդահամարի տվյալներ ստուգում և թարմացում

### 1. ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՓԱԳՐՈՒՄ



### ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԳՈՐԾՐՆԹԱՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈԻԼԵՐԸ

- 3. Գույքի նկարագրության արձանագրությունների ստորագրում և դրանց ծանուցում
- 4. Գույքի գնահատում, փոխհատուցման հաշվարկ
- 5. Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի պատրաստում

#### 1. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

#### 2. ԳՈՒՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒՄ

- Ձեր տրամադրված տեղեկատվության և համայնքում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում կազմվում է գույքի (հող, շինություն, բիզնես) նկարագրության արձանագրությունը:
- Համոզվե՛ք, որ դուք տրամադրել եք բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:
- Արձանագրությունը կներկայացվի Ձեզ ստորագրելու համար: Համոզվե՛ք, որ ձեր գույքը ճիշտ է նկարագրված:
- Իրականացնող կողմի ստորագրումից հետո մեկ օրինակը պաշտոնական ծանուցմամբ կուղարկվի Ձեզ փոստով:

#### 3. ԳՈՒՑՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ, ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՇՎԱՐԿ

- Ձեր կողմից ստորագրված գույքի նկարագրության արձանագրության հիման վրա կսկսվի Ձեր գույքի գնահատումը:
- Գնահատման մոտեցումների վերաբերյալ ձեր հարցադրումները կարող եք տալ Հանրային լսումների ժամանակ:

#### 4. ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ (ՀՕՏՕ)

- Ծրագրում ներկայացվելու է փոխհատուցման ընդհանուր մոտեցումը, Ծրագրի հնարավոր ազդեցությունները և փոխհատուցման ընդհանուր բյուջեն:

- ՀՕՏՕ հաստատումը Ասիական Զարգացման Բանկի կողմից

- ՀՕՏՕ հաստատումը ՀՀ կառավարության կողմից

#### Ե. ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

- Ծրագրի իրականացումը ենթադրում է ծրագրում նկարագրված բոլոր ազդեցության ենթակա անձանց հետ օտարման պայմանագրերի կնքումը և փոխհատուցման տրամադրումը հետևյալ փուլերով՝

1. Գույքի օտարման նախնական պայմանագրի/համաձայնագրի պատրաստում և ծանուցում
2. Գույքի օտարման պայմանագրի/համաձայնագրի կնքում և փոխհատուցման փոխանցում
3. Գույքի օտարման պայմանագիրը չկնքելու դեպքում գույքի օտարում՝ դատական կարգով

#### 1. ԳՈՒՑՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ԾԱՆՈՒՑՈՒՄ

- Ձեզ կներկայացվի նախնական պայմանագիրը:
- Ծանոթացեք պայմանագրի բովանդակությանը և օրենքով նախատեսված ժամկետում ներկայացրեք ձեր առարկությունները:
- Լրացրեք անհրաժեշտ տեղեկատվությունը, օրինակ բանկային հաշվեհամարը:
- Բանկային հաշվեհամարի վերաբերյալ տեղեկատվության բացակայության պարագայում, Ծրագրի իրականացման գրասենյակը ձեր անունով կբացի հաշվեհամար:

#### 2. ԳՈՒՑՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄ

- Ձեզ հետ կկնքվեն պայմանագրերը:
- Փոխհատուցման գումարը կփոխանցվի ձեր բանկային հաշվեհամարին:

#### 3. ԳՈՒՑՔԻ ՕՏԱՐՈՒՄ ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ

- Գույքի օտարումը դատական կարգով կիրականացվի եթե՝ (1) ազդեցության

## ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԳՈՐԾՐՆԹԱՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈԻԼԵՐԸ

Ենթակա անձը հայտնում է իր անահամաձայնությունը և հրաժարվում է ստորագրել գույքի օտարման պայմանագիրը; և/կամ (2) օտարման պայմանագրի կնքումը անհնար է օրենսդրությամբ սահմանված պայմանների բացակայության պատճառով

- Դատական կարգով օտարումը կիրականացվի հետևյալ փուլերով՝
  - փոխհատուցման գումարը կփոխանցվի դատարանի դեպոզիտային հաշվին
  - դեպոզիտային հաշվից 7-օրյա ժամկետում գումարը չվերցնելու դեպքում ձեռքբերողը օտարման դատական հայցով կդիմի դատարան
  - դատարանի վճռով հողը կօտարվի



### Զ. ՃԱՆԱՊԱՐՀԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԿԻԶԲ

- Ճանապարհի շինարարությունը չի սկսվի մինչև բոլոր ազդեցության ենթակա անձանց հաշվեհամարներին չփոխանցվի փոխհատուցման գումարը, կամ
- Մինչև օտարման վերաբերյալ դատական վճիռը չգրանցվի ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում



### Կոնտակտային տվյալներ

«Քաղաքային Կայուն Զարգացման Ներդրումային Ծրագրի»  
Իրականացման գրասենյակ

Հասցե՝ ք. Երևան, 0010, Բուզանդի 1/3,  
5-րդ հարկ,  
Հեռ. (+374 10) 565487, 520973  
www.sudipyerevan.am

Ասիական Զարգացման Բանկի  
Հայաստանում ռեզիդենտ առաքելություն

Հասցե՝ ք. Երևան, 0010, Վազգեն  
Սարգսյան 10; Piazza Grande,  
3 հարկ; գրասենյակներ 79, 80, 81  
+374 10 546373  
www.adb.org